

5724

Հայկական ԽՍՀ — Армянская ССР

Ա. ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ. ԲԱԼԵՏԻ ՊԵՏՅԱՏՐՈՆ
Государств. ордена Ленина театр оперы и балета им. А. А. Спендиарова

782 *այ*
0-57

ԼՈՒՍԱԲԱՅԻՆ

Ոգերա հինգ գործողությամբ, վեց պատկերով

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ,
ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ԼԻԲՐԵՏՏՈ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ Տ. ՀԱԽՈՒՄՅԱՆԻ

782
0-57

782
0-57

02.09.2013

5724

25 OCT 2010

ӨЗБЕКИСТОН ҶУМҲУРИЯТИ
 Тошкент вилояти, Бухоро вилояти
 2007-СОРА.
 А. МАСУМОВА
 ҚУРБАНОВА ИЛТИМ

884
40



2. Usbqatovani

Ֆրիգոր, գրահագնացֆի մեքենավար, բուշեվիկ

Արեվիկ, նրա նշանածը, գեղջկուհի

Սիմոն բիճա, Արեվիկի հայրը

Սոնա, նրա կինը

Արամ, Արեվիկի յեղբայրը, դաշնակցական բանակի զինվոր

Դավիթ

Ռուբեն

Կարո

} բուշեվիկ բանվորներ

Անդրեյ, ռուս բանվոր, բուշեվիկ

Սարոյան, գրահագնացֆի պետ

Բարխանով, դաշնակցական սպա

Սերժ, դաշնակցական բանակի զինվոր

Զոփուր-Ջենո, խմբապետ

Ոգսեն

Կոկոլ

Լիպո

} մաուգերիստներ

Վանո, գյուղական կոմիսար

Դեպոյի պետ

Բանտապետ

Բանվորներ, գյուղացիներ, զինվորներ, պարտիզաններ:

Լ Ո Ւ Ս Ա Ւ Յ Ի Ն

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկաթուղային դեպո

Հայաստան. 1920 թվի մայիս:

Պահեստի ուղիներում զրահագնացք, վոր նորոգման և բերված: Նրա մոտ պահակ և կանգնած զինվոր Արամը:

Դեպոյում հավաքվել են գործադուլավոր բանվորները. նրանք բուն ցասումով բողոքում են հայ սոցիալ-դավաճանների՝ դաշնակների կամայականության դեմ:

Գալիս և բոլշևիկ մեքենավար Գրիգորը: Նա հաղորդում է, վոր վարչությունը բանվորների պահանջները մերժել է: Գրիգորը կոչ է անում բանվորներին հարելու ապստամբությանը, վոր սմբողջ յերկիրն է բռնել:

Պորուչիկ Բարխանովի և դեպոյի պետի ուղեկցությամբ հայտնվում է զրահագնացքի պետ կապիտան Սարոյանը: Յերբ Բարխանովը իմանում է, վոր բանվորները վճռել են գործադուլ անել, հեռանում է: Փոքր ինչ անց՝ նա նորից է գալիս, այս անգամ սպառազինված զինվորների մի ջոկատի գլուխ անցած: Նրա հետ է դաշնակ Չոփուր-Չենոն: Դաշնակը պահանջում է իր ձեռքը հանձնել զրգոխների: Ամբոխի միջից լսվում են ցասկոտ ձայներ՝ «ժողովրդի թշնամիները դուք եք: Դուք դահիճներ եք»:

Չոփուր-Չենոն կատաղում է. նա ջոկատին հրամայում է «պատրանոտ»: Առաջ է գալիս զինվոր Արամը և Գրիգորին մատնացույց անելով, ասում է, վոր բանվորներին զրգոտը նա յե: Գրիգորին ձերբակալում և տանում են:

Չոփուր-Չենոն փողով պարզևատրում է Արամին: Բանվորները ցրվում են. բոլոր կողմերից Արամի հասցեյին զայրագին բացականչություններ են լսվում՝ «մատնիչ»: Արամը խորա-

պես հուզված ե, շփոթված. վոչինչ չհասկանալով, նա մեկ փո-
ղին ե նայում, մեկ հեռացող բանվորներին:

Գալիս ե կենտրոնից ուղարկված բուլշևիկ Անգրեյը. բան-
վորները հաղորդում են նրան Գրիգորի ձերբակալման մասին,
ավելացնելով, վոր իրենք վճռել են պայքարը շարունակել:
Անգրեյը ջերմորեն վողջոււում ե նրանց վորոշումը:

«Հիշեցեք,—ասում ե նա,— ընկերներ. մեզ հետ ե ամբողջ
առա ժողովուրդը,— բանվորներն ու գյուղացիները, մեզ հետ ե
ՍԵՐ ԼԵՆԻՆԸ»:

ՅԵՐԿՐՈՐԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայկական գյուղ

Զինվոր Արամի ծնողների խարխուլ տնակը: Արամի մայրը՝
Սոնան յերգում ե դաշնակների լծի տակ հեծող ժողովրդի վշտի
մասին:

Լսվում ե Արամի քույր Արևիկի յերգը: Նա հենց նոր նա-
մակ ե ստացել իր նշանածից, մեքենավար Գրիգորից: Քնքորեն
մորը գրկելով, նա հավատացնում ե նրան, վոր լավ որերն
այլևս հեռու չեն, վոր ժողովուրդը պատրաստ ե կովելու իր
ազատութան համար:

Այդ բուպեյին լսվում ե հարբած դաշնակների խմբի յերգը:
Մայր ու աղջիկ շտապ փակում են դարպասը: Գուռը թակում
են: Այդ— Արամն ե, վոր իմբի հետ տուն ե դարձել: Նա հոգնած
ե ու քաղցած: Բայց տանն ուտելու վոչինչ չկա: Արամը գրպա-
նից հանում ե Չոփուր-Չենոյից ստացած փողը ե մեկնում ե
քրոջը՝ նրան նվիրելու մտադրությամբ: Մայր ու աղջիկ զար-
մանում են, թե այդքան փողը վորտեղից ե: Արամն սկզբում
փորձում ե ճշմարտությունը թաղցնել, բայց հետո բուրբը պատ-
մում ե: Արևիկը յեղբորը մատնիչ ե անվանում ե փողը նրա
յերեսին ե շարատում: Արամն շտապ հեռանում ե:

Դարպասը բացվում ե, բակ են լցվում քոթավա վանոն ե
դաշնակների պետ Ոգսենը՝ իր ընկերներ Կոկոլի ու Լիպոյի հետ:
Նրանք իրենց հետ բերում են Արամի հորը՝ Սիմոնին: Վանոն
պահանջում ե, վոր Սիմոնը գիշերն օթեվան տա իրենց:

Սիմոնի բակը լցվում ե ամեն տեղից այգտեղ բերած աղ-
ջիկներով, վորոնց գոռով ստիպում են պարել: Սկսվում ե ցոփ
կերուխում: Ոգսենը հետապնդում ե իրեն դուր յեկած Արևիկին:
Սիմոնն ու մյուս գյուղացիները խնդրում են Ոգսենին նրան
ձեռք չտալ, վորովհետև նա նշանված ե: Արևիկն իր հերթին
ամոթանք ե տալիս Ոգսենին: Կատաղած Ոգսենը վճռում ե վրեժ

հանել հանդուգն աղջկանից. նա պահանջում է, վոր Արևիկի ծեր հայրը՝ Սիմոնը՝ պարի: Սիմոնն սկզբում հրաժարվում է այդ ստորացուցիչ պահանջը կատարելուց, բայց հետո, վախենալով վոր դա աղետի պատճառ կդառնա, սկսում է պարել ու յերգել՝

Փչիր, ուստա, փչիր, մանվան պարն իմ,
Փչիր, յես հիմա պարեմ:

Ոգտե՛նք ու նրա բարեկամներն սկզբում բարձրաձայն քրքրում են, բայց հետո նրանց անակնկալ սօրսափ է պատում. ծերուկն անընդհատ արագացնում է պարի տեմպը. գտակն ընկել է նրա զլխից, սպիտակ մազերը քամուց թրթռում են: Նրան կանգնեցնելու փորձերը զուր են անցնում:

— Բավական է, — մոլեգնած բղավում է Ոգտենը և կրակում է. Ծերուկն անշնչացած վայր է գլորվում: Սոսկումի է ցամաքն ընդհանուր ճիչ: Արևիկը շեշտակի նետվում է դեպի Ոգտենը և թիկունքից դաշունահար է անում նրան: Բակ են լցվում Արևիկի ընկերները: Դաշնակները շտապ փախչում են, իրեց հետ տանելով Ոգտենի դիակը:

Գյուղից՝ կատարը տաքացած՝ վերադառնում է Արամը: Հորը սեռած տեսնելով, սոսկահար խոնարհվում է նրա դիակի վրա:

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Զրահագնացքի մաս, պահեստի գծի վրա

Գիշեր է: Զրահագնացքի մոտ, խարույկի շուրջը հավաքված են մի խումբ զինվորներ: Նրանց մեջ է և Արևիկը: Նա կարողում է Գրիգորի նամակը բանտից. այդ նամակով Գրիգորը զինվորներին հորդորում է իրենց ձեռքին պահել զրահագնացքը: Արամի մոտենալը նկատելով, Արևիկը նշան է անում զինվորներին, վոր ցովեն: Զինվորների խումբը ցրվում է:

Վերջին իրադարձությունները՝ Գրիգորի ձերբակալությունը և հոր մահն ընկճել. ծանր մտատանջություն մեջ են գցել Արամին. նա չգիտի, ի՞նչ ճշմարտությունն ում կողմն է:

Գալիա է դաշնակ պորուչիկ Բարխանովը: Նա հրամայում է Արամին մնալ զրահագնացքի մոտ, իսկ ինքը մոտենում է այդ բոսնիյն ներս մտնող կապիտան Սարոյանին: Բարխանովը հայտնում է Սարոյանին բանվորների գործադուլի լուրը և առաջարկում է զրահագնացքի նորոգումը հանձնարարել կալանավորված Գրիգորին, խոստանալով զրա փոխարեն նրան բանտից ազատել: Սարոյանը Բարխանովին ուղարկում է Գրիգորին բերելու:

Սարոյանը մտատանջություն մեջ է. ժողովրդի թշվառության պատկերը խիստ ծանր է ազդել նրան. նա նոր արյունահեղություն չի ուզում: Բերում են Գրիգորին: Սարոյանը խոսում է այն մասին, թե հարազատ ժողովրդի տրագեդիան տեսնելը վորքան ծանր է իր համար:

Հեռվից լսվում են մի տխուր յերգի հնչյունները: Յերգողը խելագար Սոնան է, վոր դանդաղորեն գնում է ճանապարհով՝ վորդուն և աղջկան գտնելու:

Գրիգորը հայտարարում է, վոր այդ կինը դաշնակների կամայական լեթյան անխիղճ զոհերից մեկն է: Բարխանովը խիստ առնով ընդհատում է նրան և առաջարկում է զրահագնացքը

նորոգել: Գրիգորն արհամարանքով մերժում է այդ առաջարկը՝
Նրան նորից բանտ են տանում:

Ժողովրդի թշվառությունից ցնցված՝ Սարոյանը հավա-
քում է զինվորներին ու բանվորներին և առում է նրանց, վոր
ինքն անցնում է ապստամբների կողմն ու զրահագնացքո նրանց
արամադրության տակ է դնում: Բանվորները ցնծությամբ են
ընդունում այդ առաջարկը և սկսում են նորոգել զրահագնացքը:
Բանվոր Ռուբենը հիշեցնում է ընկերներին, վոր բանտերը
լիքն են կալանավորված հեղափոխական մարտիկներով և կոչ է
անում ողնության գնալ նրանց: Մի խումբ բանվորներ գնում
են դեպի բանտը: Նրանց մեջն է և Արևիկը: Սարոյանն ու իր
ջոկատը կարմիր դրոշին հավատարիմ մնալու յերգում են տակիս:

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Դաշնակների բանտում

Կալանավորների մեջ են բուլշիկներ՝ Գրիգորը, Անդրեյը,
Դավիթը: Ուշ յերեկո յե: Պատուհանից թուլթ են ներս գցում:
զրանով կալանավորներին հայտնում են, վոր ընկերներն ուզում
են այս գիշեր նրանց ազատել:

Մատուցորիսաների և յերկու զինվորների ուղեկցությամբ
բանտ է մտնում Չոփուր-Չենոն ու սկսում է ծաղր ու ծանակի
յենթարկել կալանավորներին: Դավիթը հարձակվում է նրա
վրա: Տուր ու դմփոց է սկսվում, լավում է մի կրակոց: Կալա-
նավորները զինվորներից խլում են բանալիներն ու զենքը,
նրանց դուրս են անում բանտից և դուռը ներսից փակում են:

Չոփուր-Չենոն ու պառնում է բոլոր բանտարկյալներին
զ՝ զակահարի, յեթե «բունտի» դրոշներին իր ձեռքը չհանձնեն:
Առաջ է գալիս Գրիգորը՝

Ստոր դահիճ, խփիր,

Բայց գիտցիր,

Վոր Հայաստանը կարմիր է լինելու, կարմիր...

Կալանավորները ջերմորեն արձագանքում են Գրիգորին:

Յերկրորդ պատկեր

Հրապարակ բանտի շենքի առաջ

Գիշեր է. հորդ անձրև է գալիս: Բանտի պատուհանից
զուրս է նայում Գրիգորը: Յածրում, բանտի պատի տակ, մեղմ
ձայնով յերգում է ժամապահ Սեթոն:

Պահականոցից դուրս են գալիս Չոփուր-Չենոն և Արամը:
Չոփուր-Չենոն Արամին կարգում է յերկրորդ ժամապահ: Սե-
թոն և Արամը զրուցում են: Նրանք վորոշում են կալանավոր-

ներին ոգնել: Ծառերի հետեից հայտնվում է Արեվիկը: Նա խնդրում է իր յեզրորից խանգարել հեղափոխական կալանավորների ազատմանը: Արամը համաձայնվում է:

Արևիկը հայտնում է Գրիգորին, վոր զրահագնացքը բանվորների ձեռքին է և կապիտան Մարոյանն ապրտավ բների շարքերում:

Վտտնաձայն լսելով, Արամը նախազգուշացնում է Արևիկին, վոր նա հեռանա. նա խոստանում է քրոջն իմացնել, յերբ կալանավորներին գնդակահարության ասնելու կլինեն:

Արևիկը թագնվում է ծառերի հետևում: Չոփուր-Չենոն, բանտապետ և զինված զաշնակները բանտ են մտնում: Գուրաը մնում են Արամը, Մ.թոն և զաշնակ Լիպս: Արամն ազդանշան է տալիս բանվորներին, իմացնելով, վոր գործելու ժամանակն է:

Բանտից դուրս է փախում անաբեկված Չոփուր-Չենոն՝ ոգնություն կանչելով: Նրանից անմիջապես հետո դուրս են վազում կալանավորները: Արամն արձակում է հրայանը և սպանում Չոփուր-Չենոյին:



ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկաքգիծը բունելի առաջ

Յերեկո յե. զրահագնացքը թագրել են թունելում. պարտիզա՛ները հավաքվել՝ յերգում ու պարում են: Նրանց բարձրացրած ազմուկն աստիճանաբար լուծում է:

Գալիս են Մարոյանն ու Գրիգորը: Նրանք անհանգստացած են. — զաշնակների մոտ բանակց. թյան վնացած պառլամենտյորները դեռ չեն վերադարձել: Գրիգորը չի հավատում «հաշտության բանակցությունների» բարենպաստ վախճանին:

Չ անագնացքի մոտ ժամապահ է կանգնած Արևիկը: Նա մեղմ ձայնով տխուր յերգ է յերգում: Գրիգորը մոտենում է նրան. նա ասում է, վոր հիմա տխրելու ժամանակը չէ, վերովհետև վերջնական հաղթության որն արդեն մոտ է:

Հանկարծ նրանց ո շագրությունը զբավում է գաղտագողի մտեցող մի սովեր: Գրիգորը բարձրացնում է հրացանը, բա ց դեռ չկրակած, վերադար վայր է բնկնում: Իրարանցում է սկզբովում: Արամը տանտ մ է յերեւը ծածկած մի անհայտ մարդու, — դա պորուչիկ Բարխանովն է: Պարտիզանները պահանջում են պորուչիկին գնդակահարել:

Գալիս է զաշնակների մոտ պառլամենտյոր ուղարկված Վարդանը: Նա խիստ տանջված է ու յերեսն արուևնավա: Վարդանը հաղորդում է, վոր յերկրորդ պառլամենտյորին՝ Դավթին, զաշնակները գնդակահարել են: Արամը պահանջում է անհապաղ դանիճներ դեմ գույս գալ:

Գրիգորը, վոր միայն վիավորված էր, այսպիսի կոչ է ուղղում պարտիզաններն. «բնկերներ, նրանք դրոշակ են բարձրացնում, մահի է սարկության դրոշակ, իսկ մենք պարզենք մեր դրոշակը, կարմիր ազատության դրոշակը, Լենինյա՛»:

Գրիգորը բարձրանում է զրահագնացքի վրա, վորն արդեն պատրաստ է մեկնել ու: Ծածարում է կարմիր դրոշ: Մարտական քայլերգի հնչյունների տակ Չ կատը կոխվ է գնում:

51

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0302558